

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳՆԱԿԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ
Խառը/համակցված ուսուցման համար



<<ՖԿՍՊԻ>> ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

Բառարան

Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների

Կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ, որոնք օգնում են հասնել ծրագրի վերջնարդյունքներին, նպաստելով սովորողների կոմպետենցիաների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդները դրանք դասախոսի և ուսանողների համատեղ գործունեության միջոցներ են ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ:

Դասավանդման մեթոդներն այն մեթոդներն են, որոնց օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ:

Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսումնառողները ձեռք են բերվում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ:

Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:

Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ: Օրինակ դերային խաղը կամ թեզը և ուսուցման, և գնահատման մեթոդ է, աշխատանք գրքով և ուսումնառության, և դասավանդման մեթոդ է:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.

- լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից,
- կիրառվեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,
- լինեն բազմատեսակ,
- խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության,
- համապատասխանեն ուսուցման նպատակներին,
- ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,
- ուսանողների և դասախոսների հաղորդակցման, փոխհարաբերությունների ոճերը լինեն արդյունավետ,
- համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին, դասախոսների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Գիտելիքների գնահատման մեթոդներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- օբյեկտիվությունը,
- ստուգման անհատական բնույթը,
- համակողմանիությունը,
- ստուգման անցկացման ձևերի բազմազանությունը,
- տարբերակված մոտեցումը,
- համակարգայնությունը և կանոնավորությունը:

Գնահատումն ունի հետևյալ չափորոշիչները.

- նկարագրում են գնահատման առաջադրանքում ուսանողի կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը/ աստիճանը:
- պահանջում են սահմանել և հրապարակել կրթական վերջնարդյունքների ձեռքբերման հնարավոր մակարդակները:
- կարող են ունենալ տարբեր տեսք, սովորաբար՝ նկարագրական ձևաչափ:
- պարունակում են համառոտ և հստակ տեղեկատվություն գնահատման տվյալ առաջադրանքում ուսանողի կատարողականի տարբեր մակարդակների վերաբերյալ, ինչը տարբեր գնահատողներին թույլ է տալիս իրականացնել հիմնավորված գնահատում:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է ուսանողների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: Հաշվի առնելով այս չափանիշը ուսուցման մեթոդները դասակարգվում են պասիվ, ակտիվ, ինտերակտիվ:

Ուսուցման պասիվ մեթոդներ- Դա ուսանողների և դասախոսների փոխգործունեության ձև է, որտեղ դասախոսը հանդես է գալիս որպես հիմնական գործող և ուսումնական գործընթացի կառավարող, իսկ ուսանողները հանդես են գալիս որպես պասիվ ունկնդիրներ: Դասախոսի կապը ուսանողների հետ իրականանում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի և այլ աշխատանքների միջոցով:

Ուսուցման ակտիվ մեթոդներ - Դա ուսանողների և դասախոսների համագործակցությունն է միմյանց հետ, երբ ուսանողները ուսուցման գործընթացում հանդես են գալիս որպես ակտիվ մասնակիցներ: Այս ուսուցման մեթոդներն ապահովում են ուսանողների արդյունավետ, ստեղծագործական գործունեությունը:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ - Համագործակցություն է զրույցի երկխոսության շրջանակներում, ի տարբերություն ակտիվ մեթոդների, ինտերակտիվ մեթոդները նպաստում են ուսանողների համագործակցությանը ոչ միայն դասախոսի, այլ նաև միմյանց հետ:

Դասավանդման պասիվ մեթոդներ

1. Դասախոսություն

Դասախոսությունը ծավալով մեծ նյութի բանավոր ներկայացումն է, որն ունի ավելի խիստ, տրամաբանական բարդ կառուցվածք, տեղեկատվության մեծ ծավալ: Դասախոսության արդյունավետությունը որոշվում է նրա պլանի առկայությամբ և ուսանողներին դասախոսության պլանի մասին տեղեկատվությամբ: Դասախոսությունը լինում է մի քանի տեսակի, որոնք լինում են պասիվ և ակտիվ:

Պասիվ տեսակներն են.

- Նախատեսված սխալներով դասախոսություն- Թեման ներկայացնելուց հետո դասախոսը հայտնում է, որ իր խոսքի մեջ կան որոշակի քանակի սխալներ: Դասախոսության ավարտին ուսանողները պետք է դրանք հրապարակեն:
- Դասախոսություն-երկխոսություն-Սա երկու դասախոսների աշխատանք է, որոնք ընթերցում են նույն դասախոսությունը համագործակցելով ինչպես իրար հետ, այնպես էլ լսարանի հետ: Երկխոսության ընթացքում ներկայացվում է հիմնախնդիրը, իրավիճակների վերլուծությունը, լուծումների հիմնավորումը կամ հերքումը և համատեղ ճիշտ լուծման որոնումներ են անում:
- Դասախոսություն (դիտողականության օգտագործմամբ)-Դասախոսություն է, որն ուղեկցվում է ցուցադրությամբ, նկարներով, լուսապատկերով, տեսաֆիլմերով և այլն:

Եվ ակտիվ տեսակները

- Պրոբլեմային դասախոսություն-Դասախոսը սկզբում ուսանողներին ներկայացնում է պրոբլեմային խնդիր, իրավիճակ և ներգրավում է ուսանողներին այդ խնդրի վերլուծությանը: Հիմնվելով ունեցած գիտելիքների վրա, համատեղ լուծում են խնդիրը, հիմնավորում ստացված արդյունքները, ձեռք բերում նոր գիտելիքներ:
- Դասախոսություն մամլո ասուլիսի տեսքով- Դասախոսի խնդրանքով ուսանողները գրավոր ներկայացնում են հայտարարված թեմայի վերաբերյալ իրենց հետաքրքրող հարցերը և ամբողջ դասախոսությունն ընթանում է հարցերին պատասխանելու տեսքով:

2. Անհատական աշխատանք

Ուսանողներն ինքնուրույն իրականացնում են գործունեություն առանց դասախոսի ղեկավարման: Դասախոսը հանձնարարում է առաջադրանք, հետևում է կատարման ընթացքին, առաջացած խնդիրների դեպքում միջամտում է, տրամադրելով խնդիրների լուծման համար անհրաժեշտ օգնություն և ուսումնական գործունեության հետագա բարելավման ուղղությամբ անում առաջարկություններ:

3. Ցուցադրությունը և պատկերագրումը

Ցուցադրությունը (դեմոստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում գնահատելու-զգայական ձևով ծանոթացնելն է:

Որպեսզի ավելի ակտիվացվի ուսումնառողների ինքնուրույնությունը խիստ կարևոր է նրանց դիտարկվող առարկայի, երևույթի, գործընթացի բացատրություններին, վերլուծություններին ընթացքին, արդյունքներին ներգրավելը:

Պատկերագրումը (իլյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը, դրանց սիմվոլիկ պատկերներով: Պատկերագրումն միջոցներ են հանդիսանում պլակատները, քարտեզները, սխեմաները, աղյուսակները, նկարները, պատճենները, բազմագույն պլաստիկոպատ քարտերը, ալբոմները, հարթ մոդելները, գիտնականների նկարները, գրատախտակին արվող գծագրերը: Այս մեթոդները զուգակցվում են խոսքային մեթոդներով:

4. Գիտական հաշվետվությունը- ստեղծագործական գիտահետազոտական աշխատանքի արդյունքն է, որն իրականանում է հետազոտական աշխատանքի խնդիրների, մեթոդիկայի բովանդակության և արդյունքների մանրամասն շարադրանքի տեսքով: Բովանդակում է հետևյալ բաժինները՝ հետազոտության արդիականության, նպատակի, խնդիրների և մեթոդիկայի հիմնավորումը, օգտագործված գրականության ցանկը: Հաշվետվությունը շարադրվում է գիտական ոճով:

5. Գիտական հոդված

Բացահայտում է հետազոտողի տեսական և կիրառական աշխատանքի որոշ հարցեր: Այն բովանդակում է քննարկվող հիմնախնդրի արդիականությունը, գիտական տարբեր ուղղությունների զարգացման հեռանկարները, տեսական և փորձարարական աշխատանքների նկարագրությունը, հետազոտվող հիմնախնդրի լուծման վերաբերյալ եզրակացություններ ու մեթոդական հանձնարարականներ:

6. Հետազոտական աշխատանք

Ինքնուրույն ուսուցման մեթոդ է, որը պահանջում է անհատական ուղղվածություն, այն կիրառվում է թեզերի կամ այլ տեսակի հետազոտական աշխատանքներում, որոնք ավարտում են և ամփոփում ուսումնական ծրագիրը: Ուսանողը պետք է ցուցաբերի վերարտադրելու, հաշվետվություն ներկայացնելու, իր կամ մյուս ուսանողների հետազոտությունների արդյունքները գնահատելու կարողություններ: Այս գործընթացը ղեկավարվում է դասախոսների կողմից մի քանի ուսումնական կիսամյակների ընթացքում, որի ժամանակ քննարկվում է հետազոտության ամբողջ ընթացքը, ստացված արդյունքները:

Դասավանդման ակտիվ մեթոդներ

1. Լաբորատոր մեթոդն ուսուցման այնպիսի մեթոդ է, որի ժամանակ ուսումնառողները դասավանդողների ղեկավարությամբ և նախապես որոշված պլանով անց են կացնում փորձեր կամ պրակտիկ հանձնարարություններ, որոնց գործընթացներում ընկալվում և իմաստավորվում են նոր և/կամ ատացած գիտելիքները: Լաբորատոր աշխատանքը ուսումնառողներից պահանջում է ավելի մեծ ակտիվություն և ինքուրույնություն:

2. Վարժություններ

Վարժությունն ուսուցման մեթոդ է, որն իրենից ներկայացնում է յուրացրած նյութը պրակտիկայում կիրառելու նպատակով բազմաթիվ անգամ կատարելու պլանավորված, կազմակերպված գործողություն: Տարբերվում են վարժությունների հետևյալ տեսակները՝ հատուկ, մեկնաբանություններով, գրավոր, բանավոր, գրաֆիկական, արտադրական-աշխատանքային:

3. Զրույց

Երկխոսություն է, որի ժամանակ դասախոսը հարցերի միջոցով հաղորդում է ուսումնառողներին նոր նյութը կամ ստուգում յուրացման աստիճանը: Զրույցները կարող են կիրառվել յուրաքանչյուր կրթական խնդիր լուծելու համար: Տարբերում են անհատական, խմբային և համալսարանային տեսակները: Դիդակտիկ խնդիրներից դուրս գալով տարբերվում են

- **ներածական** – օրինակ՝ ուսումնական նյութի վերաբերյալ հետաքրքրություն ձևավորելու համար, ուսումնառողների գիտելիքների յուրացման, պատրաստվածության մակարդակի որոշման և այլ տեսակի:
- **Նոր գիտելիքների հաղորդման գրույց**, որը կարող է ունենալ վերարտադրող, պրոբլեմային և էվրիստիկ բնույթի: Վորջիններս տարբերվում են հարցերի խորությամբ, քանակով:
- **Ամրապնդող գրույցները** կիրառվում են թեմայի ուսումնասիրման ավարտին, օգնում են համակարգել գիտելիքները:
- **Վերահսկող- շտկող գրույցները** կիրառվում են ախտորոշման նպատակով:

4. Խմբային քննարկումներ

Այս մեթոդը բաղկացած է երկու փուլից: I փուլի ժամանակ ուսանողի առջև դրվում է հիմնախնդիրը և սահմանափակվում է կատարման ժամանակը: Կարելի է խմբում նշանակել ղեկավար /լիդեր/: II փուլի ժամանակ քննարկման արդյունքում ընդունվում է որոշում, հիմնավորվում համատեղ դասախոսի հետ: Այս մեթոդների տեսակներից է կլոր սեղանը, որի ընթացքում տեղի է ունենում կարծիքների, փորձի, նվաճումների փոխանակում:

5. Հրապարակային ներկայացում (պրեզենտացիա)

Ներկայացումը կարևոր տեղեկատվության տրամադրման միջոց է հրապարակային ելույթների ժամանակ:

6. Լուսապատկեր (Սլայդ)

Ներկայացումները թույլ են տալիս արդյունավետ ու տեսանելի դարձնել հաղորդման բովանդակությունը:

7. Տեսաֆիլմերի դիտում և քննարկում

Այս մեթոդը կիրառվում է ուսուցման յուրաքանչյուր փուլում, այն դեպքում, եթե այն համապատասխանում է դասի թեմային և նպատակին: Դիտումից առաջ ուսանողներին ներկայացվում է հիմնական հարցը քննարկման համար: Կարելի է դիտել ամբողջ ֆիլմը կամ առանձին դրվագներ: Վերջում առանձին քննարկվում են հարցերը և ամփոփվում:

8. Արտալսարանային (ուրոտային) աշխատանք

Որի ժամանակ ուսանողները ձեռք են բերում կամ ցուցաբերում են հատուկ մասնագիտական գիտելիքներ, կարողություններ պրակտիկային ընթացքում՝ տեղակայված տարբեր վայրերում: Այդ մեթոդի նպատակն է հնարավորություն տալ ուսանողներին կիրառել ձեռքբերված գիտելիքները: Շատ կարևոր է, որ դասախոսը կամ մասնագետն անցկացնի անհատական խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում նաև միջամտի:

9. Ուղեկցված ինքնուսուցում

Ուսանողները ձեռք են բերում կամ կիրառում են գիտելիքներ մի դասընթացից կամ դասընթացի մի մասից ինքնուրույն աշխատանքի ժամանակ: Ինքնուսուցման դեպքում տրամադրվում է ադապտացված ուսումնական նյութեր և աջակցություն դասավանդողի կողմից: Աջակցությունը տրամադրվում է հետևյալ տեսքով. ակնարկների, առանձին հարցերի, դիագրամների, հիմնական հասկացությունների, ընթացիկ առաջադրանքների և այլն:

Ուղեկցված ինքնուսուցումը տարբերվում է հեռահար ուսուցումից նրանով, որ ունի կենդանի շփում դասախոսի հետ:

10. Ինտեգրված սեմինար

Այստեղ կենտրոնանում են տարբեր դասընթացների բովանդակությունների ինտեգրումը: Անցկացվում է հաղորդակցման քննարկումների, վարժությունների, դերային խաղերի, մոդելավորումների, կարճ առաջադրանքների և այլ միջոցներով: Այս տեսակի սեմինարը թույլ է տալիս անցկացնել անհատական կամ խմբային խորհրդատվություն:

11. Մագիստրոսական թեզ

Մագիստրոսական թեզը հետազոտական նախագիծ է, որն ամբողջականացնում է մագիստրոսական ծրագիրը, որը պետք է բավարարի կրթական աստիճանի որոշակի պահանջներին: Այս մեթոդը դիտվում է նաև որպես գնահատման մեթոդ:

12. Միկրոդասավանդում

Ուսանողները ներկայացնում են թեմաներ, որոնք պատրաստել են ինքնուրույն կամ խմբով: Այս մեթոդի նպատակն է ակտիվացնել ուսանողների ինքնուրույն աշխատանքը,

զարգացնել նրանց ներկայացման կարողությունները և դասավանդման հմտությունները: Դասախոսը, ունկնդրող ուսանողները մեկնաբանում են ներկայացված աշխատանքը, անում առաջարկություններ: Դասախոսը կարող է նաև համատեղ ուսանողի հետ աշխատել նախապատրաստական փուլում:

13. Մեմինար

Մեմինարի միջոցով խորացվում, համակարգվում և վերահսկվում են ուսանողների գիտելիքները: Մեմինարն անցկացնելու համար ներկայացվում է անցկացման պլանը, հիմնական և լրացուցիչ գրականությունը: Մեմինարի սկզբին ներածական խոսքով ելույթ է ունենում դասախոսը, հետո սկսվում են հարցերի քննարկումները: Պարապմունքի ավարտին դասախոսը ամփոփում է սեմինարը, որպեսզի ուսանողներն առավել ակտիվ լինեն, երբեմն նշանակվում են ընդդիմախոսներ: Տարբերում են սեմինարների մի քանի տեսակներ. սեմինար-զրույց, սեմինար-բանավեճ և այլն:

14. Առցանց քննարկումներ

Ուսանողները հաղորդակցվում են ուսումնասիրվող թեմաների վերաբերյալ, փոխանակելով նամակներ և պատասխաններ:

Որպեսզի կազմակերպվի քննարկում, ղեկավարը ներկայացնում է թեման կամ առաջարկությունը, առաջադրում է հարց կամ թեմայի վերաբերյալ որևէ տեսանկյուն: Առցանց քննարկման հիմնական նպատակն է փոխանցել գիտելիքներ այս եղանակով, սովորեցնել ուսանողներին զարգացնել և հիմնավորել սեփական մասնագիտական կարծիքը: Դասախոսը կարող է մեկնաբանել ուսանողների մտքերը, ամփոփել քննարկումները, խթանել ուսանողների իմացական ակտիվությունը և այլն:

15. Խնդիրների վրա հիմնված ուսուցում (Խնդիրների առաջադրմամբ ուսուցում)

Սա ինտերակտիվ ուսուցման մեթոդ է, երբ դասախոսը ուսանողների փոքր խմբերին օգնում է վերլուծել խնդիրը, որը շատ թերի է կազմված: Ուսանողների հետ սահմանում է ուսուցման հարցերը և աջակցում է խնդրի ինքնուրույն լուծմանը: Խնդիրների լուծման ընթացքում դասախոսը չի առաջարկում պատրաստի գիտելիք ուսանողներին, ուսանողներն իրենք են փնտրում նոր գիտելիք, որն իրենցից պահանջում է առաջադրված խնդիրը լուծելու համար: Դասախոսը չի մասնակցում քննարկումներին, միայն որոշակի ուղղություն է տալիս քննարկման ընթացքին: (Ուսուցում հիմնված խնդիրների լուծման վրա)

16. Պրակտիկում

Ինքնուրույն ուսուցման մեթոդ է, երբ ուսանողները ձեռք են բերում կամ կիրառում հատուկ մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ: Ուսանողներն անհատական կամ փոքր խմբերով անցկացնում են փորձարկումներ և իրենց տրամադրվում է լիարժեք ուղղորդում: Դասախոսը պատասխանատու է կազմակերպման և ուսանողներին ուղղորդելու համար: Պրակտիկումներն անցկացվում են լաբորատորիաներում, հատուկ լսարաններում և այլն: Պրակտիկումներն ուղղված են ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացմանը, որոնք անհրաժեշտ են կարիերայի ընթացքում: Քանի որ

պրակտիկումները պահանջում են դասախոսից անհատական կամ խմբային ուղղորդում, ձևավորվում են փոքր խմբեր:

17. Նախագծի մեթոդ

Այս մեթոդը ներառում է ուսանողների ուղղորդում և ինքնուրույն ուսուցում, որը կատարվում է անհատական կամ խմբակային աշխատանքների ընթացքում: Հիմնական նպատակն է դասընթացների տարբեր բաժինների բովանդակության և կոմպետենցիաների ինտեգրումը: Որպես ինքնուրույն կամ անհատական աշխատանք, ուսանողներն իրականացնում են մի շարք թիմային կամ անհատական գործողություններ առանց դասախոսի կողմից անընդհատ վերահսկման: Գործողությունների ավարտին աշխատանքը ներկայացվում է գնահատման: Ղեկավարի (դասախոսի) հիմնական պարտականությունն է հանձնարարել առաջադրանքներ, առաջարկել օգնություն կամ խորհուրդ, գնահատել ամփոփիչ աշխատանքը, ինչպես նաև ընթացքը: Այս մեթոդը պահանջում է ակտիվ թիմային աշխատանք և տվյալ բաժինների վերաբերյալ խորը գիտելիքներ:

18. Ուսումնական այցելություն

Խմբային ուսուցման մեթոդ (կրթական հաստատություններից դուրս), որպեսզի ծանոթանան ձեռնարկությունների, կազմակերպությունների, հաստատությունների գործունեության հետ: Ի տարբերություն արտալսարանային աշխատանքի, այս դեպքում կարևոր է ուսանողներին ներկայացնել տվյալներ, տեղեկատվություն տվյալ ձեռնարկությունների, կազմակերպությունների, հաստատությունների մասին: Ուսումնական այցելությունները կարող են ուղեկցվել դասախոսի, փորձագետի, ձեռնարկության ներկայացուցչի կամ այլ մասնագետի կողմից:

19. Աշխատանքի տեղակալում, որը կիրառվում է մասնագիտական ակտիվ պրակտիկայի ընթացքում, երբ ուսանողները ներգրավվում են ամենօրյա գործողություններում: Ուսանողներն այս ընթացքում ձեռք են բերում մասնագիտական գիտելիքներ և դրանց կիրառման հմտություններ: Դասախոսը (ղեկավարը) մասնակցում է աշխատանքի վայրի ընտրության և ուսանողներին նախապատրաստելու գործընթացներին: Դասախոսը (ղեկավարը) հետևում է, մեկնաբանում, օժանդակում, գնահատում է գործընթացը: Աշխատանքի տեղակալումն ունի համեմատաբար երկար ընթացք և ուսանողների ինքնուրույնության բարձր աստիճան:

20. Էվրիստիկ հարցերի մեթոդ, որն ուղղված է ուսանողների իմացական ակտիվության և ուսումնա-մասնագիտական գործունեության խթանմանը, ինչը թույլ կտա ուսանողների կողմից գիտելիքների պասիվ յուրացումից անցնել դրանց ակտիվ կիրառմանը մասնագիտական գործունեության մեջ: Էվրիստիկ հարցերն ուղղված են ինչպես գիտելիքների խորացմանը (օրինակ, ո՞րն է գլխավոր գաղափարը, սահմանե՞ք կամ ... , ձևակերպե՞ք... և այլն), կարողությունների զարգացմանը հատուկ հարցերի միջոցով (օրինակ, ինչպե՞ս կիրառել, բերե՞ք օրինակներ, նկարագրե՞ք... և այլն), և ստեղծագործական կարողությունների ու քննադատական մտածողության զարգացմանը (օրինակ, ինչպես լուծել այլ միջոցով, գտե՞ք սխալները և այլն):

21. Կոլլեկվիում

Ուսումնատեսական պարապմունք է դասախոսի ղեկավարությամբ: Խմբային քննարկումներ են, որոշ քանակի հիմնախնդիրների քննարկում դասախոսի ղեկավարությամբ: Օրինակ՝ դասախոսության մի բաժնի: Միննույն ժամանակ սա գնահատման տեսակ է, բանավոր քննություն է, որը թույլ է տալիս կարճ ժամանակահատվածում մեծ քանակով ուսանողների գիտելիքներ գնահատել: Ներկայացնելով, հիմնավորելով սեփական կարծիքները, ուսանողները ցույց են տալիս իրենց կողմից յուրացված գիտելիքների մակարդակը:

Դասավանդման ինտերակտիվ մեթոդներ

1. Ստեղծագործական աշխատանք

Այս մեթոդը ինտերակտիվ պարապմունքների հիմքն է, որի կատարումը ուսանողից պահանջում է գիտելիքների վերարտադրում և ստեղծագործական մոտեցում հետևյալ հարցերում. պրակտիկայից օրինակների ընտրության, հիմնախնդրի վերաբերյալ նյութերի ընտրության և այլն:

2. Բանավեճ

Ուսումնական բանավեճ: Նպատակաուղղված խմբային քննարկում է որևէ մի կոնկրետ հիմնախնդրի, որի ընթացքում տեղի է ունենում գաղափարների, կարծիքների փոխանակում: Ուսումնական բանավեճի արդյունավետությունը պայմանավորված է հիմնախնդրի արդիականությամբ, ուսուցչի վարպետությամբ բանավեճի անցկացման հարցում, մասնակիցների տեղեկացվածությամբ: Բանավեճն անցկացվում է 3 փուլով.

I փուլ-կողմնորոշման փուլ, մասնակիցներն ադապտացվում են միմյանց նկատմամբ, որը թույլ է տալիս ճիշտ ձևակերպել հիմնախնդիրը և նպատակը, ծանոթացնել բանավեճի անցկացման կանոնների և կանոնակարգի հետ:

II փուլ-գնահատման փուլն է, մասնակիցների ելույթները, նրանց պատասխանների, մտքերի, առաջարկությունների քննարկումը:

III փուլ- փոխհամաձայնության փուլ, որի ժամանակ վերլուծվում են ստացված արդյունքները, համաձայնեցվում են կարծիքները, դիրքորոշումները, համատեղ ձևակերպվում են որոշումները:

3. Դերային խաղ

Դա մասնագիտական գործունեության մոդելավորման միջոց է, միևնույն ժամանակ արդյունավետ ուսուցման միջոց: Կրթական գործընթացում այն ունի հետևյալ նպատակները. իմացական և մասնագիտական հետաքրքրությունների, դրդապատճառների, համակարգային մտածողության, թիմային աշխատանքի հմտությունների ձևավորում, մասնագիտության նկատմամբ հարգալից վերաբերմունքի դաստիարակում և այլն:

4. Քեյզ մեթոդ (կոնկրետ իրավիճակների վերլուծություն)

Այս մեթոդը ուսումնասիրության, վերլուծության և որոշման ընդունման մեթոդ է իրավիճակի նկատմամբ, որն ի հայտ է եկել կոնկրետ կազմակերպության և կոնկրետ ժամանակահատվածում:

Այս աշխատանքի փուլերն են.

- Դասախոսի կողմից ներածական խոսքի և հիմնական հարցերի ներկայացում,
- մասնակիցներին խմբերի բաժանում, ղեկավարի կամ լիդերի ընտրություն,
- իրավիճակի տեքստի անհատական ուսումնասիրում,
- խմբային բանավեճերի, վերլուծությունների, որոշումների ընդունում,
- դասախոսի եզրափակիչ խոսքը, վերլուծությունը, գնահատումը:

5. Թրեյնինգ

Մա ինտերակտիվ ուսուցման մեթոդ է, որի նպատակն է զարգացնել միջանձնային և մասնագիտական վարքագծերի հաղորդակցման կոմպետենցիաները:

Թրեյնինգին ներկայացվում են հետևյալ պահանջները.

- մասնակիցների օպտիմալ թվի ընտրություն
- հատուկ լսարանում անցկացում կամ (նստարանների հատուկ դասավորում
- մասնակիցներին նպատակների, խնդիրների ու կանոնների հետ ծանոթացում
- հարգալից վերաբերմունք միմյանց նկատմամբ
- մասնակիցների խրախուսում
- արդյունքների ամփոփում:

Ուսուցման այս մեթոդի կիրառությունը տեղի է ունենում 3 փուլով.

- Մասնագիտական գիտելիքների տրամադրում: Այս փուլում տալիս են պատասխաններ այն հարցերին, որոնք շատերի մոտ առաջացրել են դժվարություններ, հետո դասախոսի կամ մարզչի կողմից կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ. դերային խաղեր, բանավեճեր և այլն:
- Գործնական հմտությունների ձևավորման փուլ , որի նպատակն է ստացած բոլոր տեսական գիտելիքների հիման վրա ձևավորել գործնական կարողություններ և հմտություններ: Այս փուլում յուրաքանչյուր մասնակից պետք է ձեռք բերի գործնական փորձ սեփական կյանքի ու առողջության պաշտպանության, ինչպես նաև շրջապատի նկատմամբ: Այս նպատակով անցկացվում են դերային խաղեր, բանավեճեր:
- Արդյունքների ամփոփում, որն ուղղված է հետևյալ նպատակին՝ յուրաքանչյուր մասնակից պետք է կիսվի իր տպավորություններով, զգացողություններով: Կարելի է այս փուլն անցկացնել անկետաների լրացման տեսքով: Մարզիչը դիմում է մասնակիցներին այսպիսի հարցերով. ի՞նչ նոր բան իմացաք, ո՞րն էր հետաքրքիր և օգտակար Ձեզ համար և այլն:

6.Մտազրոհ

Այս մեթոդը խրախուսում է ուսանողների մտավոր աշխատանքը: Առաջին փուլում խմբերին ներկայացվում է հիմնախնդիր քննարկան համար: Մասնակիցները հերթով տալիս են ցանկացած առաջարկություններ համառոտ ձևով: Կազմակերպիչը բոլոր առաջարկությունները գրում է գրատախտակին առանց որևէ մեկնաբանության:

Երկրորդ փուլում քննարկվում են բոլոր առաջարկությունները: Երրորդ փուլում խումբը պատրաստում է նախօրոք պայմանավորված ձևով ամենաարդյունավետ որոշումը, մի քանի հաջող առաջարկություններ և այլն:

Կարելի է նաև մասնակիցներին բաժանել հետևյալ խմբերի.

- գաղափարներ ստեղծողների խումբ, որոնք առաջարկում են հիմնախնդրի լուծումներ,
- քննադատողների խումբ,
- վերլուծողների, որոշում ընդունողների խումբ

Ուսումնառության մեթոդները

1. Դասագրքերի, սկզբնաղբյուրների ուսումնասիրում

Այս մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասախոսի անմիջական ղեկավարությամբ, այնպես էլ ինքնուրույն: Այս մեթոդը բաղկացած է մի շարք մեթոդական հնարներից.

- մշակում – բովանդակության համառոտ շարադրում, այն կարող է լինել լրիվ տեքստի կամ ընտրված հոդվածների, առաջին դեմքի կամ երրորդ դեմքի կողմից, ավելի ճիշտ է առաջին դեմքի կողմից մշակումը, քանի որ այս դեպքում զարգանում է ինքնուրույն մտածողությունը:
- թեզիսների ներկայացում, որը հիմնական գաղափարների համառոտ ներկայացումն է
- տեքստի պլանի կազմում, երբ տեքստն ընթերցելուց հետո այն բաժանում են մասերի՝ վերնագրելով ամեն մեկը
- անոտացիա- բովանդակության համառոտ ներկայացում
- տեղեկանքի ներկայացում, երբ տեքստն ընթերցելուց հետո ներկայացնում են տեղեկանքներ կենսագրությունների, առանձին տերմինների բացատրությունների վերաբերյալ և այլն:
- տեքստի ոչ խոսքային ներկայացումը-գրաֆիկների, դիագրամների միջոցով:

2. Ունկնդրում

Գրառում է դասախոսության թեմայի վերնագիրը, պլանը, լսում է, դիտում է, մասնակցում է քննարկումներին, բերում օրինակներ, կատարում է համադրումներ, համեմատություններ, մասնակցում է եզրակացությունների ձևակերպմանը:

3. Կլաստեր

Դա ուսումնական նյութի գրաֆիկական արտացոլման ձև է: Կլաստեր ստեղծելու համար թղթի մեջտեղում ուսումնառողները գրում են բանալի բառ (գաղափար, թեմա և այլն): Այդ բառի շուրջ գրում են բառեր, բառակապակցություններ, որոնք փոկապված են կամ բացահայտում են հիմնական գաղափարը: Այս մեթոդը թույլ է տալիս ուսանողներին ավելի գիտակցաբար, արդյունավետ յուրացնել ուսումնասիրվող նյութը, ընդգծել և հասկանալ տրամաբանական կապը ուսումնառության մեջ:

4. Վարժություններ

Որի ընթացքում ուսանողները ցուցաբերում են ուսումնասիրված նյութի խորության, յուրացման աստիճանը, ինչպես նաև ձևավորված կարողությունների, հմտությունների մակարդակը: Վարժությունները կատարելուց առաջ դասախոսը ներկայացնում է ուսանողներին դիդակտիկ պահանջները և գնահատման չափանիշները: Տարբերում են բանավոր, գրավոր, գրաֆիկական մեկնաբանությամբ և այլ տեսակի վարժություններ:

5. Մոդելավորում

Այս մեթոդը նախատեսում է իրական պայմանների, հատուկ գործողությունների նմանակում, որոնք բնորոշ են մասնագիտական աշխատանքի գործընթացին: Այս ընթացքում մշակվում է մասնագիտական վարքագիծ, իրականացվում են գործառույթներ և պարտականություններ: Հիմնականում այս դեպքում տեղի է ունենում հիմնախնդրի արդյունավետ լուծում, որին մասնակացում են բոլոր ուսանողները:

6. Խառը ուսուցման մեթոդ /flipping the classroom/

Երբ փոխվում է ավանդական ուսուցման ձևը հաճախ հանձնարարվում է ուսումնասիրվող թեմայի բովանդակությունը առցանց, գործնական առաջադրանքներ, վարժություններ, ներառյալ տնային հանձնարարությունները կատարվում են դասարանում:

7. Փորձնական դասավանդում

Այս մեթոդն իրականացվում է պրակտիկայից առաջ և հնարավորություն է տալիս ուսանողներին ընկերների, դասախոսների շրջանում թույլ տալ թե ինչքանով են պատրաստ պրակտիկան անցկացնելու համար:

8. Դեբատ

Դեբատը քննարկման կամ բանավեճի տեսակ է: Դեբատը որպես ուսուցման մեթոդ կարելի է օգտագործել տարբեր առարկաների դասավանդման ընթացքում: Դեբատ ասելով հասկացվում է խնդրի քննարկումը տարբեր տեսակետների և հայացքների առկայության պայմաններում:

Դեբատների ընթացքում խմբերը /թիմեր/ (խորհուրդ է տրվում թիմում ընդգրկել 3-4 մասնակից) քննարկում են առաջադրված խնդիրը: Դեբատի թեման կարող է շատ բազմազան լինել:

Առաջին թիմի բանախոսը ներկայացնում է խմբի դիրքորոշումը և առաջադրում է խնդրին առնչվող փաստարկներ: Երկրորդ թիմի բանախոսի ելույթն ուղղված է հակափաստարկների միջոցով նախորդ թիմի դիրքորոշումը մերժելուն և սեփական թիմի դիրքերի ամրապնդմանը: Թիմերի երրորդ բանախոսները վերջնականապես մերժում են ընդդիմախոսների պնդումները և կատարում են համեմատական վերլուծություն՝ ապացուցելով իրենց ճշմարտացիությունը: Արդյունքում հաղթում է այն թիմը, որն ըստ գնահատողների ավելի համոզիչ փաստարկներով է հանդես գալիս:

Գնահատման մեթոդներ

1. Առաջադրանք, որը ներառում է հաշվետվություն, խմբային աշխատանք, գրավոր առաջադրանք, էսսե և այլն: Առաջադրանքների նպատակն է զարգացնել և ստուգել ուսանողների կոմպետենցիաները, վերլուծության կարողությունները, գիտելիքի ինտեգրված կիրառումը, նոր գիտելիքի ինքնուրույն ձեռքբերման կարողությունը, գիտական գրականությունից օգտվելու կարողություններ և այլն: Քանի որ կոմպետենցիաները սովորաբար ունեն համալիր բնույթ, այդ պատճառով անհրաժեշտ են դառնում գնահատման չափանիշների կիրառումը, որոնք պետք է հասանելի լինեն ուսանողներին և դասախոսներին:

2. Վարքագծի գնահատում աշխատանքում, որը ներառում է կատարման գնահատում, աշխատանքի օրինակի ստուգում հետադարձ կապի մեթոդ և այլն: Սա ինտեգրված ստուգում է, որտեղ ուսանողներից պահանջվում է կատարել ուսումնական կամ հետազոտական իրավիճակներում տարբեր երկարատև գործողություններ: Վարքագծի գնահատման ժամանակ առաջադրանքներն ունեն ինտեգրված բնույթ, այս գնահատումը կիրառվում է, երբ անհրաժեշտ է ստուգել մասնագիտական պարտականությունների և առաջադրանքների կատարման համապատասխանությունը ուսանողների կոմպետենցիաների մակարդակին, որը պահանջում է խորը գիտելիքներ, անալիտիկ մտածողության հմտություններ, մասնագիտական վարքագիծ, քննարկման կարողություններ, մեթոդաբանական գիտելիքներ մասնագիտական ոլորտից և այլն: Ուսանողների հմտությունները գնահատելու համար կիրառվում են գնահատման սանդղակներ, չափանիշներ և վարքագծային դիտարկելի տարրեր: Գնահատողները կարող են լինել ուսումնական խորհրդատուներ, դասավանդող դասախոսներ, պրակտիկայի վայրի ներկայացուցիչներ և այլն, որոնք ուսանողների հետ աշխատել են երկար ժամանակ:

3. Բաց գրքով քննություն

Սա գրավոր քննություն է, երբ ուսանողները կարող են օգտվել տեղեկատվական աղբյուրներից պատասխանելու իրենց առաջադրված հարցերին կամ առաջադրանքներին: Նման աղբյուրների օրինակներ են. դասագիրք, հոդված, էլ. դասախոսություններ, բառարաններ, քարտեզներ և այլն: Բաց գրքով գնահատման ժամանակ ուսանողները չեն վերաբառնում տեղեկատվությունը: Նպատակն է ստուգել, թե որքանով են ուսանողներն ունակ. օգտագործել աղբյուրների տեղեկատվությունը, վերլուծել խնդիրները, կատարել առաջադրանքները, առաջարկել լուծումներ, գնահատել դեպքեր և այլն:

4. Բանավոր քննություն, որը դիտվում է որպես երկխոսություն, որտեղ քննողը տալիս է հարցեր, հարցվողը բանավոր պատասխանում է: Այն քննողին հնարավորություն է տալիս ստուգել ուսանողի գիտելիքները նախապես տրված հարցերի միջոցով: Քննողն իրավունք ունի տալ լրացուցիչ հարցեր (հանձնարարված հարցերի շրջանակից), որպեսզի բացահայտի, թե ինչ խորությամբ է յուրացված թեման, ավելի ճշտել գնահատականը:

Բանավոր քննության մի մասը կարող է լինել ներկայացման տեսքով:

5. Մասնակցություն

Այս մեթոդը գնահատում է ուսանողների ակտիվությունը քննարկումներին, տարբեր տեսակի պարապմունքներին: Քանի որ միայն ներկայությունը (հաճախումը) չի նպաստում ուսանողի կողմից բովանդակության իմացություն կամ հմտության տիրապետում: Ուսանողի մասնակցությունը գնահատելու համար դասախոսը օգտագործում է գնահատման սանդղակ: Մյուս դեպքում հաճախելիությունը հանդես է գալիս որպես գնահատման բաղադրիչ:

6. Գործընկերների գնահատում

Ուսանողները գնահատում են միմյանց կատարած աշխատանքները: Գործընկերների գնահատումը հաճախ օգտագործվում է թիմային աշխատանքներում: Գնահատելով մյուսներին ուսանողները սովորում են ինչպես կարող են իրենք կազմակերպել իրենց մասնակցությունը ընդհանուր գործողություններում և ինչ է անհրաժեշտ անել այդ ուղղությամբ:

Գործընկերների գնահատումը կարող է ազդեցություն ունենալ ուսանողի ամփոփիչ գնահատման համար, և չի կարող որոշիչ լինել ուսանողի քննությունը հանձնելու համար: Գործընկերների գնահատումը թույլ է տալիս և՛ դասախոսներին, և՛ ուսանողներին ճշտել, ուղղել իրենց վարքագիծը և կոմպետենցիաները:

7. Պորտֆոլիո, որտեղ ուսանողները ներկայացնում են իրենց անհատական ուսուցման գործընթացը և ձեռքբերած կոմպետենցիաները, հիմնվելով, կատարված հաշվետվությունների, նկարների և այլ տեսակի փաստերի վրա: Պորտֆոլիոն թույլ է տալիս դասախոսին ունենալ ուսուցման գործընթացի վստահելի և համալիր ամբողջական պատկերը: Պորտֆոլիոները հաճախ ծառայում են ուսանողներին սեփական մասնագիտական աճին, ձեռքբերումները տեսանելի դարձնելու, վերլուծելու և գնահատելու համար: Պորտֆոլիոները հիմնականում օգտագործվում են պրակտիկաների ժամանակ, քանի որ տալիս են ճշգրիտ պատկեր ուսանողի մասնագիտական կամ հետազոտական աշխատանքների կատարման մասին: Պորտֆոլիոները կարելի է պահել էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

8. Հաշվետվությունը գնահատում է ուսանողի կատարած առաջադրանքը կամ խմբի անդամների ներդրումը: Մա վերջնական արդյունք չէ, այն ցույց է տալիս, թե որքանով են ուսանողները ունակ նկարագրելու և հիմնավորելու սեփական մոտեցումը: Այս մեթոդը պահանջում է գնահատման հատուկ չափանիշներ, որոնք կարտացոլեն ուսանողների իրազեկվածությունը, թե իրենցից ինչ է սպասվում ներկայացնել հաշվետվության մեջ և գնահատման հնարավորինս օբյեկտիվությունը:

9. Հմտությունների թեստ, որի նպատակն է պարզել, թե որքանով են ուսանողներն ունակ իրականացնել տարբեր կոմպետենցիաները, օգտագործելով իրենց գիտելիքները: Ելնելով նպատակից դասախոսը որոշում է. առանձին հմտության է պետք ստուգվի, որպես ամբողջականի մի մաս, կամ պետք է ստուգվեն մի շարք հմտություններ: Ուսանողների կոմպետենցիաները ստուգվում են գործնական առաջադրանքների միջոցով, կիրառվում են

մասնագիտական սարքավորումներ /լաբորատոր սարքավորումներ, հատուկ համակարգչային ծրագրեր, գործիքակազմ և այլն/: Ուսանողների հմտությունների գնահատման համար օգտագործվում է գնահատման սանդղակ կամ գնահատման հատուկ չափանիշներ:

10. Գրավոր քննությունը հարցերով գրավոր քննություն

Գրավոր քննությունը բաղկացած է հարցերից և տարբեր պատասխաններից: Ուսանողներից պահանջվում է ընտրել ճիշտ պատասխանները, որոնք թույլ են տալիս ստուգել գիտելիքները, հմտությունները, կոմպետենցիաները: Հնարավոր պատասխանները բաղկացած են սխալ այլընտրանքներից և մեկ ճիշտ պատասխանից:

Ուսանողներին անհրաժեշտ է ներկայացնել գնահատման սանդղակը, հարցերի և տարբերակների քանակը:

11. Բաց հարցերով գրավոր քննություն

Գրավոր քննություն է, որը բաղկացած է հարցերից, իսկ պատասխանները ուսանողներն են ձևակերպում: Կախված ակնկալվող պատասխանի երկարությունից կարելի է առանձնացնել մի շարք տարբերակներ. Օրինակ՝ կարճ պատասխաններով հարցեր և ավելի երկար պատասխաններով հարցեր՝ օրինակ էսսեի միջոցով:

12. Ռեֆերատ

Ռեֆերատի ծավալը 7-10 էջ է և ունի տրամաբանական հետևյալ կառուցվածքը. ներածություն, հիմնական մաս և եզրակացություն: Ներածության մեջ վերլուծության են ենթարկվում թեմային վերաբերող բոլոր մոտեցումները, մեկնաբանվում է թեմայի հիմնական հասկացությունները, ընդգծվում է հիմնախնդիրը: Հիմնական մասում համակարգված, հիմնավորված ձևով ներկայացվում է հիմնախնդիրը և նրա նշանակությունը կրթության համար: Եզրակացության մեջ համառոտ եզրահանգումներ են և թեմայի զարգացման հնարավոր հեռանկարներ: Որպես գնահատման չափանիշ հաճախ հանդես են գալիս հետազոտության առարկայի իմացությունը, շարադրման տրամաբանությունը, ինքնուրույնությունը, ստեղծագործականությունը, հիմնավորվածության աստիճանը:

13. Գրախոսություն

Դա հողվածի վերաբերյալ քննադատական կարծիք է, հիմնավորված գնահատական է հողվածի գաղափարների, հիմնախնդիրների լուծման համար, այն արտահայտում է գրախոսողի սեփական դիրքորոշումը գրախոսվող հողվածի վերաբերյալ:

14. Էսսե

Ոչ մեծածավալ աշխատանք է, որն արտահայտում է հեղինակի անհատական կարծիքը, տեսանկյունը հիմնախնդրի վերաբերյալ: Աշխատանքում մտքերի արտահայտման ձևերը, եզրակացությունների ձևակերպումները և այլն գրվում են հեղինակի հայեցողությամբ: Հեղինակը կարող է համադրել տարբեր կարծիքներ և իր կարծիքը ներկայացնել: Կարևոր պահանջ է հեղինակի տեսակետի արտահայտումը ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ: Այս աշխատանքի ժամանակ շատ է կարևորվում

գեղարվեստական միջոցների ընտրությունը. համեմատությունների, աֆորիզմների կիրառում, հղումներ և այլն: Էսսեին բնորոշ է շարադրման դինամիկ բնույթ, որն ապահովվում է հետաքրքիր հարցեր, անսպասելի անցումներ, անկանխատեսելի եզրահանգումներ: Էսսեի հիմնական նպատակն է հետաքրքրություն առաջացնել հիմնախնդրի վերաբերյալ, ընթերցողին հասցնել հեղինակի տեսակետը և ստիպել նրանց մտածել առաջ քաշված հիմնախնդրի շուրջ:

15. Ուսումնական հետազոտություններ

Գնահատման մեթոդ է, որի նպատակն է զարգացնել ուսանողների հետազոտական կարողությունները: Ուսումնական հետազոտությունը խմբային նախագիծ է 3-5 ուսանողների մասնակցությամբ, որի իրականացումը կազմված է հետևյալ փուլերից.

- հետազոտության թեմայի ընտրությունը- այս փուլի հիմնական խնդիրն է բացահայտել հետազոտության մասնակիցների անհատական հետաքրքրությունները և մասնակցության դրդապատճառները,
- հետազոտական թիմերի կազմակերպում, հետաքրքրությունների և հոգեբանական համատեղելիություն: Այս փուլում հաղորդվում է թեման և բաժանվում են ուսանողների միջև աշխատանքներ,
- հետազոտության համար հայտի ներկայացում (հիմնախնդրի հիմնավորում ու ձևակերպում), հետազոտության նպատակի, խնդիրների, օբյեկտի ներկայացում (սահմանում), ինչպես նաև աշխատանքային պլանի կազմում,
- հետազոտության գործիքակազմի հաստատում- մեթոդների սոցիոլոգիական հարցերի ընտրություն,
- դաշտային հետազոտության անցկացում- ռեսպոնդենտների (հարցվողների) ընտրություն, հետազոտության նպատակին, օբյեկտին համապատասխան: Որպես կանոն հարցվողների թիվը չի գերազանցում հարյուրը,
- Տվյալների վերլուծություն, հաշվետվության ձևակերպում – սկզբնական վերլուծության տվյալների վիճակագրական մշակում հատուկ ծրագրի միջոցով (SPSS),
- Կատարված աշխատանքների պաշտպանություն լսարանում: Ուսումնական հետազոտությունը դիտարկվում է որպես քննական աշխատանք, որտեղ գնահատական են տալիս նախագծին և ամեն մի մասնակցին, ըստ հետազոտությանն առնչվող հարցերի ու պատասխանների հիման վրա:

16. Գործնական առաջադրանքներ

Սա գնահատման մեթոդ է, երբ սկզբում դասախոսները ներկայացնում են աշխատանքի խնդիրները, պահանջները և ուսումնառողներն աշխատում են դասախոսի ղեկավարության ներքո, հատուկ լսարաններում, լաբորատորիաներում, արհեստանոցներում և այլն: Այս մեթոդի հիմնական նպատակն է տեսական գիտելիքների հիման վրա ձևավորել գործնական կարողություններ, հմտություններ: Այս մեթոդի կիրառումը թույլ է տալիս դասախոսին ստուգել տեսական գիտելիքների յուրացման աստիճանը և դրանց կիրառումը:

17. Ինքնաստուգում, փոխաստուգում

Ինքնաստուգումը – Ուսանողն ինքնուրույն բացահայտում է իր աշխատանքում թույլ տված սխալներ, անում է համապատասխան ուղղումներ և ավելի է բարձրացնում իր գիտակցականության մակարդակը ուսուցման գործընթացում:

Փոխաստուգումը միմյանց աշխատանքների ստուգումն է, որը զարգացնում է ուսանումնառողի ուշադրությունը, ինքնուրույնությունը կատարված աշխատանքների նկատմամբ:

Այս գնահատման մեթոդներն ակտիվացնում են ուսանողների իմացական գործունեությունը, զարգացնում ինքնուրույնության աստիճանը և նպաստում թիմային, զույգերով աշխատանքներին և այլն: